11923

891.99
Z-25

1913

ՀԱՅԿԱԶՈՒՆԻ ՆԵՐՍԷՍ

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

---

2003

1913

Վաղարշապատ

Էլեկտրատիպ տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

2823
891.99
Հ-25

*
* *

Հրաշալի օրեր, սիրուն վարկեաններ,
Անցաք, գնացիք, թողիք ինձ մենակ.
Եւ դուք, իմ սիրուն անցած բալէններ,
Հեռացաք ինձնից, թողիք միայնակ։

Եւ ես տխրեցի մի քնար առայ,
Եւ այդ քնարով մի աշուղ դարձայ
Ես լարին խփի, սիրտս բորբոքի,
Եւ հեռու հեռու կողմեր գնացի։

---

## ԵԶՆԵՐՍ ԱՌԱՋ

Եզներս առաջ
Ճամբէն բռնեցի
Քաշեցի հառաչ
Ու դուզ գնացի։

Անձրև է բռնել.
Ամէն ինչ տխուր.
Երկինքը մթնել.
Աշխարհն է լուռ։

Անձրևի ձեռքից
Տներ են փլել,
Չար մարդկանց խօսքից
Սրտեր թառամել։

---

*
* *

Անտուն անտէր թափառում եմ
Չար սուր լեզուից վիրաւոր,
Ծնողքս թողած հեռանում եմ
Չար խօսքերից ահաւոր։

Ա՜խ, թող քաշեն, կրծքիս զարկեն
Մեծ վէհ սուրը արծաթից,
Քան թէ վրաս վատ խօսք ասեն
Սիրտս ծակող կայծակից։

---

## ՌԱՓՓՈՒՆ

Ցոլաց պայծառ արեգակը
Որպէս ժպիտ երեխա,
Ցոլաց, անցաւ սիրունեակը,
Նշան տուաւ իմ դէմքիս։

Եւ նա իրա նուրբ շողերը
Տարածեց ամենայն կողմ.
Քաշեց իրա ջինջ քօղերը,
Անցաւ ինչպէս ձմրան հողմ։

---

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

11923

2013

5 կոպ.